ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր 13.11.2023թ. հ.030 գրության՝ Սայաթ-Նովայի պողոտայի և «Կասկադ» համալիրի հարակից տարածքում ծառերի փոխարինման վերաբերյալ, տեղեկացվում է, որ ծառերի փոխարինումն իրականացվել է «Երևան համայնքում կենսունակության ավարտին մոտ գտնվող և ամբողջովին դեֆորմացված ծառերի փոխարինում արժեքավոր և գեղազարդ ծառերով: Ինվազիվ ծառերի հեռացում» ծրագրի շրջանակներում: Սայաթ-Նովայի պողոտայի (Ֆրանսիայի հրապարակից մինչև Վ. Տերյան փողոցի խաչմերուկ հատվածում) ծառերը փոխարինվել են գնդաձև սոսիներով, իսկ Մոսկովյան փողոցում՝ «Կասկադ» համալիրի դիմացի հատվածում, սակուռա ռոյալ բարձունքի ծառատեսակներով:

Ծառերի փոխարինման համար հատումներն իրականացվել են Երևանի քաղաքապետի 26 ապրիլի 2021թ.-ի թիվ 1236-Ա որոշմամբ հաստատված ծառահատման տոմսերով և Երևան քաղաքի ավագանու 18.11.2009 թվականի թիվ 36-Ն որոշման 12-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ